ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով Սիլվա Ասատրյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Քաղաքացի Սիլվա Ասատրյանը 17.06.2009թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի 2-րդ մասով,ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358 հոդվածի 3-րդ մասով և 393 հոդվածի 3-րդ ու 10-րդ մասերով սահմանված դրույթների սահմանադրականության հարցը:
2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.
   1. «ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում Սիլվա Ասատրյանին մեղսագրվող 2001թ.-ին կատարված արարքի համար կիրառել 2003թ.-ին ընդունված քրեական օրենսգրքի՝ անձի վիճակը վատթարացնող դրույթը՝ 66 հոդվածը, ճանաչել ՀՀ սահմանադրության 42 հոդվածի 3-րդ մասին, 14.1 ու 3 հոդվածներին հակասող և անվավեր:
   2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393 հոդվածի 3-րդ և 10-րդ մասերն ու 358 հոդվածի 3-րդ մասը, այնքանով, որքանով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, վճռաբեկ դատարանը հնարավոր է համարում Սիլվա Ասատրյանի վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավճռի հիմքում դնել

առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ դատարանում չհետազոտված ապացույցներ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 19, 14.1 և 3 հոդվածներին հակասող և անվավեր»:

3. Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացրել է հետևյալ հիմնավորումները.«...վճռաբեկ բողոքի հիմքերից մեկն այն է, որ դատարանը անձի վերաբերյալ մեղադրական դատավճիռ է կայացրել ոչ առաջին ատյանի և ոչ էլ վերաքննիչ դատարանում չհետազոտված ապացույցներին հղում կատարելով, ինչով խախտվում են Սահմանադրության 18 և 19, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ու 3-րդ մասի d կետի պահանջները: [...]

Դատարանը, Սիլվա Ասատրյանին մեղավոր ճանաչելով և ՀՀ քր. օր-ի՝ դատավճռի կայացման պահին գործող խմբագրությամբ 66 հոդվածի կիրառմամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Սիլվա Ասատրյանի նկատմամբ՝ 9 տարի ժամկետով ազատազրկում կիրառելով, թույլ է տվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 12 և 13 հոդվածներով նախատեսված սկզբունքների խախտում, որոնց համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու պահին գործող քրեական օրենքով: Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում ներկայացրել է ոչ թե իր կողմից վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները, այլ՝ մանրամասն անդրադարձ է կատարել առ այն, թե ինչպիսի բովանդակություն ունի վճռաբեկ դատարան իր կողմից ներկայացված բողոքը, ինչպես նաև շարադրված են ընդհանուր իրավասության դատարանների գործունեությունը որակավորող և ըստ էության խիստ անհատական բնույթ ունեցող գնահատականներ: Մինչդեռ, անհատական դիմումին ներկայացվող՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և Սահմանադրական դատարանի կանոնակարգով սահմանված պահանջներից մեկն էլ վիճարկվող օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումների շարադրումն է:

4.Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումն առնչվում է ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության հետ, այլ այդ դրույթների կիրառման օրինականության և իրավաչափության հետ: Դիմումում

ձևականորեն բարձրացնելով վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը դիմողը, չներկայացնելով վերջիններիս հակասահմանադրականության վերաբերյալ որևէ փաստարկ, ըստ էության առաջ է քաշում համապատասխան դատական ակտերի օրինականության և իրավաչափության խնդիր՝ փորձելով հիմնավորել այնպիսի իրավակիրառ պրակտիկայի առկայությունը, որը, ըստ էության ձևավորվում է համապատասխան դատական ակտերի կայացման արդյունքում: Որպես վերջինիս փաստարկ՝ դիմողը ներկայացնում է միայն վճռաբեկ բողոքում շարադրված վերաքննիչ դատարանի խախտումների վերաբերյալ իր կողմից ներկայացված հիմնավորումներին վճռաբեկ դատարանի կողմից տրված բացասական պատասխանը:

Սահմանադրական դատարանն իր 28.11.2006 թվականի ՍԴՈ-668 որոշմամբ համանման իրավիճակի համար արդեն իսկ նշել է, որ «... Դիմողը նորմի հակասահմանադրականության որևէ փաստարկ չի ներկայացնում, այլ առաջ է քաշում այդ նորմի կիրառման պարագայում դատարանների վճիռների հիմնավորվածության խնդիրը, որի գնահատումը սահմանադրական դատարանի իրավասության մեջ չի մտնում: Ընդհանուր իրավասության դատարանների իրավասության ենթակա քաղաքացիաիրավական վեճերը լուծելու հարցը չի կարող դառնալ սահմանադրական արդարադատության առարկա, որի միջոցները տվյալ համատեքստում չեն կարող համարժեք լինել դիմողի շահերի պաշտպանության համար»:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ կետով Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղաքացի Սիլվա Ասատրյանի դիմումի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԵՐ ԲՈՒԹՅՈՒՆ